

ՑԱՆԿ

**Մաքսային Միության և Միասնական տնտեսական տարածքի
իրավապայմանագրային բազայի ձևավորման շրջանակներում կնքված
միջազգային պայմանագրերի, որոնց միանում է Հայաստանի
Հանրապետությունը**

1. «Ապրանքների ծագման երկրի որոշման միասնական կանոնների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիր,
2. «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիր (*«Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թվականի ապրիլի 23-ի արձանագրության խմբագրությամբ*),
3. «Մաքսային միության սակագնային արտոնությունների միասնական համակարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրություն,
4. «Զարգացող կամ առավել թույլ զարգացած երկրներից ապրանքների ծագումը որոշելու կանոնների մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիր,
5. «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիր (*«Մաքսային միության Մաքսային օրենսգրքի մասին 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2010 թվականի նոյեմբերի 27-ի արձանագրության խմբագրությամբ*),
6. «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև փոխադարձ վարչական օգնության մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր,
7. «Մաքսային միության անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային գրանցամատյանի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր,
8. «Տարանցիկ փոխադրման մաքսային ընթացակարգի համաձայն փոխադրվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելուն առնչվող որոշ հարցերի, այդպիսի ապրանքների նկատմամբ

սահմանված մաքսատուրքերի, հարկերի գանձման առանձնահատկությունների և գանձված գումարների փոխանցումների կարգի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր - (*«Տարանցիկ փոխադրման մաքսային ընթացակարգի համաձայն փոխադրվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելուն առնչվող որոշ հարցերի, այդպիսի ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի գանձման առանձնահատկությունների եւ գանձված գումարների փոխանցումների կարգի մասին համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2010 թվականի մայիսի 21-ի արձանագրության խմբագրությամբ*),

9. «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մասին նախնական տեղեկությունները փոխանակելու և ներկայացնելու մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր,
10. «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների և այլ պետական մարմինների միջև տեղեկատվության փոխանակմանը ներկայացվող պահանջների մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր,
11. «Մաքսատուրքերի վճարման ժամկետների փոփոխման հիմքերի, պայմանների և կարգի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր,
12. «Մաքսային միության մաքսային տարածքով երկաթուղային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մաքսային տարանցման առանձնահատկությունների մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր,
13. «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ապրանքների տեղափոխման և նրանց բացթողնման հետ կապված մաքսային ձևակերպումներ իրականացնելու կարգը» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր - (*«Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ապրանքների տեղափոխման և նրանց բացթողնման հետ կապված մաքսային ձևակերպումներ իրականացնելու կարգի մասին համաձայնագրում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի արձանագրության խմբագրությամբ*),
14. «Ազատ պահեստների և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր
15. «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության որոշակի ձևեր չկիրառելու մասին» 2010 թվականի հունիսի 10-ի համաձայնագիր,
16. «Մաքսային միության մաքսային տարածքում ներքին փոխադրումների նպատակով ուղևորների փոխադրում իրականացնող միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների, ինչպես նաև բեռներ և (կամ) ուղեբեռ փոխադրող

- կցորդների, կիսակցորդների, կոնտեյներների և երկաթուղային շարժակազմի օգտագործման առանձնահատկությունների մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր,
17. «Միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների մաքսային ձևակերպումների առանձնահատկությունների մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր,
 18. «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների և ազատ մաքսային գոտու մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի շուրջ» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր,
 19. «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման կարգի մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի պայմանագիր,
 20. «Մաքսային միության և Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության խախտման համար քրեական և վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի պայմանագիր,
 21. «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև քրեական գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով փոխգործակցության և իրավական օգնության մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի համաձայնագիր,
 22. «Երրորդ երկրներից անօրինական աշխատանքային միգրացիային հակազդելու համար համագործակցության մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագիր,
 23. «Բազմակողմ առևտրային համակարգի շրջանակներում Մաքսային միության գործունեության մասին» 2011 թվականի մայիսի 19-ի պայմանագիր,¹
 24. «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի մասին» 2011 թվականի հունիսի 22-ի պայմանագիր,
 25. «Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների ներկայացուցչությունների գործունեությանն առնչվող հարցերով մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» 2011 թվականի հունիսի 22-ի համաձայնագիր,

¹ «Բազմակողմ առևտրային համակարգի շրջանակներում մաքսային միության գործունեության մասին» 2011թ. մայիսի 19-ի պայմանագիրը կիրառվում է 2012թ. օգոստոսի 22-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ: Նշված Պայմանագրում Հայաստանի Հանրապետության մասնակցությունը չի հանգեցնում Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության միանալու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների տարածմանը Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ-պետությունների և ընդհանուր առմամբ Եվրասիական տնտեսական միության նկատմամբ, բացառությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին 2014թ. մայիսի 29-ի Պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» Պայմանագրի 3-րդ Հավելվածի 38-րդ կետով նախատեսված դեպքերի:

26. «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների վերլուծական և վերահսկողական գործառույթներն իրականացնելու նպատակով տեղեկությունների փոխանակումը կազմակերպելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի համաձայնագիր,
27. «Մաքսային միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման դեմ հակազդման միջոցների ապահովման մասին» 2011 թվականի դեկտեմբերի 19-ի պայմանագիր,
28. «Մաքսային միության անդամ պետությունների Մաքսային միության անդամ չհանդիսացող՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հետ փոխադարձ առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման մասին» 2012 թվականի դեկտեմբերի 17-ի համաձայնագիր,
29. **«Մաքսային միության մաքսային տարածքով թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի և դրանց պրեկուրսորների տեղափոխման կարգի մասին» 2013 թվականի հոկտեմբերի 24-ի համաձայնագիր:**